ՆՈՐ-ԴԱՐ

№ 74 ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 7 Մայիսի **1891** Երեքշաբթի 7 Մայիսի ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 74

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., Հասում՝ 5 կոպեկ։
Բաժանորդ կընդունին Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով.
Գոյատարութիւնից բաժին 2 կ., բնկերների համար կրկնապատիկ։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

«Նոր-Դար»-ին մայիսի 1-ից բաժանորդ են գրւում և վճարում են 7 րուբլի 25 կ.։ Հասցէն Тифлисъ, въ редакцію „Норъ-Даръ“.

Նրանք — աշխարհական թէ հոգևորական,—որոնց վրայ ապառիկներ են մնում, խնդրում ենք, որ յիշեն իրենց պարտքը և ուղարկեն խմբագրութեանս։

Խնդրում ենք ի գլուր տեղը չը ծանրացնեն մեր գործը, որ ընդհանուրի գործն է։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեռագիրներ։
Քրոնիկոն.—Կարեւր Քաղաքային կանոնադրութեան վերանորոգումների նոր ծրագրի մասին։
Թղթակցութիւններ.— Ախալցխայ։
Քաղաքական.—Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր։
Բանասիրական.— Աներեւոյթ։
Տեղական։
Յայտարարութիւններ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴԻՐՔԱԿԱՑՈՒԹԻՒՆԻՆ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—3 Հայիսի.—Մոսկուայի ընդհանուր-նահանգապետի պաշտօնակատարի հեռագրին՝ որ նա ուղարկել էր Թագաժառանգի վտանգից ազատուելու առթիւ, Թագաւոր Կայսրը հաճեց պատասխանել. «Խոր զգացուած ենք Մոսկուա քաղաքի յայտնած ցաւակցութիւնից։ Թագաժառանգի հետ Մեր անպատմելի ընորհակալութիւնն ինքը եասլոնական կայսրը Կիօտո ուղևորուեց և հասաւ այնտեղ երէկ երեկոյեան. երկաթուղու կայարանում նրան դիմաւորեց ռուսաց դեսպանը, որ Թագաժառանգի կողմից ողջունեց նրան։ Այսօր առաւօտեան եապոնական կայսրը տեսնուեց Նորին Բարձրութեան հետ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 Հայիսի.—Ընդհանուր-ծովակալի՝ Թագաժառանգի հրաշալի ազատութեան առթիւ ուղարկած հեռագրին Թագաւոր Կայսրը հաճեց պատասխանել. «Երջանիկ եմ իմանալով, որ Թագաժառանգը նորից ազողութեամբ նաւախումբը դարձաւ և նստեց «Պամեաթ Ազովա» նաւը, շրջապատուած լինելով մեր քաջ նաւաստիների սիրով և անձնուիրութեամբ»։

«Петерб. Лис.»-ը հաղորդում է, թէ մայիսի 1-ի խաղարկութեան գլխաւոր գումարն ընկել է Պետերբուրգում ալիւր վաճառող Կարետնիկովին։

ԼՈՆԴՈՆ.—Այստեղի եապոնական դեսպանութիւնը եապոնական մի նիխտրից ստացուած հեռագրից քաղուացք է ուղարկել լրագիրներին։

Լոնդոնում ապրող եապոնացիները երէկ միտինգ կազմեցին, որտեղ զայրացած յայտնեցին, թէ ռուսաց Թագաժառանգի կեանքի դէմ կատարուած փորձը քամնելի է, և ուրախութիւն յայտնեցին, որ վէրքը վտանգաւոր չէ, նոյնպէս և յոյս յայտնեցին, որ Թագաժառանգը շուտով կ՚առողջանայ։

«Morning Post»-ն ասում է, թէ ռուսաց կայսերական տունը կրկնակի կապերով այնպէս սերտ կապուած է անգլիական արքայական տան հետ, որ ընտանեկան դժբաղդութիւնը սրտեռանդ ցաւակցութեան է հանդիպում Անգլիայում և ժամանակաւորապէս յարուցուող տարաձայնութիւնները չեն կարող երերել անգլիացիների դէպի ռուսաց կայսերական տունը տածած խիստ յարգանքի զգացմունքները։

ԱԹԷՆՔ.—Երէկ Կորֆու կղզու վրայ դարձեալ երկու հրէայ է սպանուած։ Յուզմունքը աստականում է։

ԲՐԻՒՍՍԵԼ.—Երէկ գոյցեր եղան սահմանադրութիւնը վերաքննելու օգտին։ Ցոյցերը շարունակուեցին մինչև երեկոյ։ Ժողովրդի խմբեր երգում էին մարսելիէզը. ոստիկանութեան հետ մի քանի ընդհարումներ եղան, շատ մարդիկ ձերբակալուեցին։

ԲԵՐԼԻՆ.—Գերմանական բանկը պաշտօնական դիսկոնտը մինչև 4 տոկոս բարձրացրեց։

ԱԹԷՆՔ.—Կորֆու հասաւ անգլիական շոգենաւը։ Պրոթիւնը փոքր ինչ լաւացաւ։ Կառավարութիւնն եռանդուն միջոցներ է ձեռք առել։ Քաղաքն առաջուայպէս բռնուած է զօրքերով։ Քաղաքապետութեան անդամների կազմութեան մէջ փոփոխութիւններ են կատարուած։ Կզգի են ուղարկուած նոր նաւեր։ Յոյս ունեն, որ շուտով յուզմունքը կը խաղաղի։

ՍՈՖԻԱ.—Բեզովն և Լազարոն, որոնք Բելչևի սպանութեանը մասնակցած էին համարուում, ձերբակալուած են Ռումինիայում, որ կը համաձայնի նրանց Բուլղարիային յանձնել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 Հայիսի.—Եապոնեայից ստացուած պաշտօնական տեղեկութիւններից երեւում է, որ Թագաժառանգի կեանքի դէմ ըսպառնացող չարագործը տեղացի է, Տուդա անունով, որ 8 տարի ծառայում էր ոստիկանութեան մէջ։ Երբ Թագաժառանգը ձեռքերի վրայ տարուող սայլակի վրայ նստած իւր հետևորդների հետ անցնում էր Օտսու քաղաքով, Նորին Բարձրութեան վրայ յարձակուեց այնտեղ և եթէ կանգնած Տուդա ոստիկանը և սրով խփեց Թագաժառանգի գլխին. չնայելով ձեռնափայտի հարուածին, որ յուշնայ Դէորդ պրինցը հասցրեց չարագործին, վերջինս երկրորդ անգամ յարձակուեց Թագաժառանգի վրայ, բայց մի եապոնացի, որ տանում էր Թագաժառանգի սայլակը, հեռու ձգեց նրան. այդ միջոցին սայլակը տանողներից մի ուրիշին աջողուեց խլել վայր ընկած չարագործի սուրը և գրանով նրան ծանր վէրք հասցնել։ Վերջին տեղեկութիւններից երեւում է, որ Թագաժառանգի վէրքն արդէն առողջացել է։

«Граждан.»-ը լսել է, թէ մինիստրների ժողովում որոշում է կայացել խնդրամատոյց լինել՝ յուշնայ պրինցին մեդալ պարգեւելու Թագաժառանգի Ռուսիայի համար թանկագին կեանքը փրկելուն համար։

«Нов. Вр.»-ն հաղորդում է, թէ պետական խորհուրդը, վերջացնելով մաքսային սակագների քննութիւնը, առանց էական փո-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԲԱՂԴԸ*)

(Տուրգենևից)

—

ԺԹ.

«Ո՛ր նրանք միմեանց տանում են, այդ պարզ է, մտածում էի ես տան վերադառնալիս,—անկասկածելի է և այն, որ նա անպիտան մարդ է, մինչդեռ Սուսաննան լաւ աղջիկ է։ Բայց ինչ է անցել նրանց մէջ. ինչ է այդ անբնդհատ դրդուան չարժառիթը. ինչ լսատ ուներն այդ ակնարկութիւնները։ Եւ ինչպէս է, որ այդպէս անսպասելի կերպով բռնկեցաւ Խնչ դատարկ պատճառով»։

Միւս օրը ես և Ֆաուստովը թատրոն գնացինք «Վելքից պատահան»-ի մէջ Շեքսպիրի ներկայացումը տեսնելու։ Այն ժամանակները նոր էին Դրիսեդովի այդ դրուածքը Թոյլ տուել ներկայացնելու, ի հարկէ, կանխօրէն զրաքննական հատուածներով այլափոխելուց յետոյ։ Մենք չատ ծանրահարուած կէինք Ֆաուստովից և Սկալոզուբից։ Չեմ յիշում, թէ ով էր Չացկու դերը կատարում, բայց չատ լաւ յիշում եմ, որ նա խիստ անպիտան էր խաղում։ Թատրոնից դուրս գալիս մենք Վիկտորին հանդիպեցանք։

—Թատրոնումն էիք,—բացականչեց նա ձեռները թափահարելով.—Ինչպէս է, որ չեմ տեսել։ Շատ ուրախ եմ ձեզ պատահելուս։ Պէտք է անպատճառ հետս ընթրէք։ Գնանք. հիւրասիրում եմ։

*) Տես «Նոր-Դար» № 73։

առաքեցինք ու Ողորմածն Աստուած»։

Երէկ Մաշկովի արշաւախումբը Պետերբուրգից Հարեչատան ուղեւորուեց։

ԲԵՐԼԻՆ.—Մայիսի 2—14-ին Մոկիօից եապոնական կառավարութեան այստեղի եապոնական դեսպանութեանն ուղարկած տեղեկութեան մէջ ասում է. «Ռուսաց Թագաժառանգի վէրքը բաւական թեթև է։ Սրդէն Կիօտոյի հիւրանոցը վերադառնալիս Նորին Բարձրութիւնը խօսում էր թիկնապահների հետ։ Առաջին բժշկական օգնութիւնը հասցնելուց յետոյ, վէրքի դրութիւնը կատարելապէս բարեբեր բնաւորութիւն ստացաւ. տենդ չկայ և Թագաժառանգն իրեն լաւ է զգում։ Եապոնական Կիտաշիրակաւա պրինցը պալատական բժիշկների և արտաքին ու ներքին գործերի մինիստրների հետ Կիօտո ուղևորուեց։ Ցաւալի անցքը եապոնական ժողովուրդի մէջ խիստ զայրոյթ է յարուցում. մամուլը ցաւ է յայտնում պատահած անցքի համար և զայրացած է։ Հաստատւում է, որ չարագործն ուղղակի մոլեռանդ է։

Երիտասարդ Բատչը յուզուած, համարեա ողեւորուած դրութեան մէջ էր։ Նրա աչքերը վազվզում էին, նա ծիծաղում էր, նրա դէմքի վրայ կարմիր լծեր երեւում։

—Այդ ինչ ուրախութեան համար է,—հարցրեց Ֆաուստովը։

—Խ՞նչ։ ա՛յ, կամենում էք հետաքրքրուել։

Վիկտորը վոքր ինչ մի կողմ տանելով մեզ և վարանելի դրպանից հանելով այն ժամանակուայ կարմիր և կապոյտ թղթադրամների մի կապոց, չարժեց օդի մէջ։

Ֆաուստովը զարմացաւ։

—Ձեր հայրը առատաձեռն է դարձել։

Վիկտորը բարձրաղաղ ծիծաղեցաւ։

—Խնչ առատաձեռն մարդ էք դուք։ Ինչպէս չէ, դրպանդ պատրաստ պահիր...։

Այսօր առաւօտը, ձեր միջնորդութեան յաւատ, փող խնդրեցի նրանից։ Ինչ էք կարծում, ինչ պատասխանէ լաւ է։ Ես, ասում է, դէ լաւ, պարտքերդ կ՚վճարեմ։ Ախ էլ մինչև քանի հինգ րուբլի Ո՛չ, յարգելի պարոն, այս Աստուած է որբիս բաժին ուղարկել։ Ճարեմ առիթ ներկայացաւ։

—Ով մինին կողոպտել է,—անհոգութեամբ ասաց Ֆաուստովը։

Վիկտորը մթագնեց։

—Ո՛ւֆ. ինչ լաւ գլխի ընկար, ճչմարիտ որ կողոպտեցինք։ Տարել եմ, տարել, ապային, մի զօրավարական ապային։ Հենց երէկ է Պետերբուրգից եկել։ Եւ ինչպիսի բնրնուն։ Արժէ պատմել... միայն այստեղ անյարմար է։ Գնանք Եպէ մօտ—երկու քայլ է ընդամենը։ Ասել եմ—ես եմ հիւրասիրողը։

Դուցէ հարկաւոր էր, որ հրաժարուէինք, բայց առանց ընդդիմաբանելու հրաւէրն ընդունեցինք և գնացինք։

ԺԵ.

Սարում մեզ առանձին սենեակ տարան, ընթրիք տուին, չամպայն գինի բերին։ Վիկտորը մանրամասնաբար պատմեց, թէ ինչպէս մի հաճելի տան մէջ պատահել էր այդ գօրավարական ապային, որ պատահական առիթից մի չատ սիրալիր երիտասարդ է, միայն մի տանտակը պակաս. թէ ինչպէս նրանք ծանօթացել են, ինչպէս նա, այսինքն ապան, հանաքով իրեն, Վիկտորին առաջարկել է հին թղթախաղերով թուղթ խաղալ ամենաչչին գանձ վրայ և այն պայմանով, որ սպան պիտի խաղար Վիկտորի բաղդին, իսկ Վիկտորն իր սեպհական բաղդին։ Թէ ինչպէս յետոյ բանը գրաւի էր հասել։

—Իսկ ես, իսկ ես—բացականչեց Վիկտորը և վեր թռաւ տեղից և ծափ տուաւ,—ընդամենը վեց րուբլի ունէի միայն։ Երեակայեցէք ձեզ։ Սկզբում բոլորովին տարաբեցայ... ինչ դրութիւն է։ Բայց յետոյ, էլ չեմ խնամում ամ աղօթքդին էր, բաղդն ինձ ժպտաց։ Նա սկսաւ տաքանալ, իր ձեռքի բոլոր խաղաթղթերը ցոյց տուեց... Մէկ էր տեսար, հօթն հարիւր յիսուն րուբլին գլորուեց։ Սկսաւ խնդրել, որ էլի խաղանք, բայց ես էլ լսս յիմար չեմ, մտածեցի—ոչ, այսպիսի բարիքն ի չարը չպէտք է գործ դնել. վեր առայ գըլխարկս և դուրս եկայ։ Այժմ այլ ես ծրագիրն կարիք էլ չկայ խնդրելու և ընկերներս էլ կարող եմ հիւրասիրել...

Հէյ, ապուռաւոր։ Մի չինչ էլ Պարոններ, չրիակացնենք բաժակները։

Բաժակները չրիակացրինք Վիկտորի բաժակն և էլի չարունակեցինք խմել և ծիծաղել, թէև նրա պատմածն աւելորդ մեր վիրը չէր գալիս, և նոյն իսկ նրա ընկերակցութիւնն էլ մեզ չատ քիչ բաւականութիւն էր պատճառում։ Նա ըսկսաւ քաղցրախօսել, դուարճաբանել, չափից անկայունել, մի խօսքով առաւել ևս զզուելի դարձաւ։ Վերջապէս Վիկտորը նկատեց, թէ ինչ ապաւորութիւն էր անում վրաներս, և խոժոռեցաւ։ Նրա խօսքն աւելի բնկրկուն դարձաւ, հայեացքն աւելի մռայլ։ Նա սկսաւ յորանջել, յայտնեց, որ քունն է տանում և իրեն յատուկ կոպտութեամբ պահպակի սպասաւորին հայհոյելով որ իր չիբուխը լաւ չէ ծաքրել, յանկարծ ծռմռուած դէմքի վրայ մարտահրաւէրի այտայայտութիւն տանելով, դարձաւ Ֆաուստովին։

—Բան եմ ասում, Ալէքսանդր Վասիլիչ,—ասաց նա,—ասացէք խնդրեմ, ինչի էք ինձ արհամարհում։

—Ինչպէս թէ արհամարհում,—չիապողացաւ իսկոյն պատասխանել բարեկամս։

—Ինչպէս էլի... Շատ լաւ գիտեմ եմ և պիտեմ, որ դուք արհամարհում էք ինձ, և այս պարոնն էլ (նա մատովը ինձ ցոյց տուաւ) նոյնպէս։ Թանկ ինդներդ մի քիչ բարոյականութեամբ բարձր լինէիք, ապա թէ ոչ դուք էլ մեզ նման մեղաւոր էք։ Աւելի էլ վատ։ Խաղաղ ջրում քաջք է թաղնում... գիտէք լսս առածը։

Ֆաուստովը կարմրեցաւ։

—Դրանով ինչ էք ուզում ասել,—հարցրեց նա։

—Այն, որ ես դեռ չեմ կուրացել և չատ լաւ տեսնում եմ, թէ ինչ է կատարում քիթս տակ,—ձեր քսի-փսին տեսնում եմ քրոջս հետ... Ես ոչինչ էլ չունեմ դրա դէմ, նրա համար, որ նախ սովորութիւն չունեմ և երկրորդ՝ քոյրս, Սուսաննա Իւանովնան, ինքն էլ կեանքի համը բաւական առել է... Բայց ինձ ինչի էք արհամարհում։

—Ձեր տասծն ինքներդ էլ չէք հատնում։ Հարբած էք,—ասաց Ֆաուստովը պատից վերարկուն առնելով։—Ով գիտէ ինչ յիմարի մէկին տարել է և այժմ էլ վչում է հա վչում։

Վիկտորը դեռ պառկած էր դահլիճի վրայ և միայն ձեռների վրայից կախած ոտներն էր չարժում։

—Տարել եմ։ Բայց ինչի զինեն խմիցիք։ Տարած փողերով էր լսս գնուած։ Իսկ փչելու կարիք չունիմ։ Մեղաւորը ես չեմ, եթէ Սուսաննա Իւանովնան իր անցեալ կեանքի մէջ...

—Լռեցէք,—գոռաց նրա վրայ Ֆաուստովը։—Լռեցէք... ապա թէ ոչ...

—Ապա թէ ոչ ինչ։

—Կիմանաք թէ ինչ։ Գնա՛ր, գնա՛նք»

—Էհէ,—չարունակեց Վիկտորը,—մեր վեհանձն ասպետը վախեցաւ։ տալիս Երևի չէ կամենում ճչմարտութիւնն իմանալ։ Երևի ճչմարտութիւնն աչք է ծակում։

—Դէ, գնանք, Գեօրգ,—կրկնեց Ֆաուստովը բոլորովին իր ատնորինութիւնն և ինքնագոհութիւնը կորցնելով։—Հեռանանք այս անպիտան երեխից։

Մոսկ. Եվր.»-ը Տաղանդաւոր է, թերեւս ոչ ոքից պակաս, բայց նրա տաղանդը ոչ մի ժամանակ չի եղել ինքնուրոյն, նա միշտ ենթարկուել է ուրիշների ազդեցութեան, ինչպէս որ ինքն էլ ասում է իր մասին։ Նրա ամենամեծ թերութիւնն այն է, որ նա ոչ մի ժամանակ չի ունեցել իր սեփական դէմքը։

(Վախճանեալ Ի)

Ա ա ա ռ ի

Ոչ ոք այդ ուրախությունն ավելի ուժգնորեն չէր զգում, քան Ալեքսանդրը։ Նա ամբողջ գիշեր չքնեց, ամբողջ գիշեր մտածում էր Ռոզայի մասին։ Ռոզան նրա համար ամեն ինչ էր։ Ռոզան նրա կյանքն էր, նրա հոգին էր, նրա սիրտը։ Ռոզան նրա ամբողջ էությունն էր։ Ռոզան նրա ամբողջ գոյությունն էր։ Ռոզան նրա ամբողջ աշխարհն էր։ Ռոզան նրա ամբողջ տիեզերքն էր։ Ռոզան նրա ամբողջ ամենը էր։

Ալեքսանդրը գիշերը չքնեց, որովհետև Ռոզան նրա ամբողջ ամեն

լուն համար չնորհակալութիւն յայտնելով, կայսրը չարունակեց. «Ես հաստատ համոզուած եմ, որ ուսանողական ընկերութեան մէջ մտնող իւրաքանչիւր հրիտասարդ, այդ ընկերութեան մէջ սիրող ոգու չնորհիւ, կեանքի համար իսկական զեկ և ամենալաւ կրթութիւնն է ստանում, որպիսին երիտասարդները կարող են ձեռք բերել միայն արդէն կատարելապէս հասակն առած ժամանակ, Ով ծիծաղում է գերմանական ուսանողական ընկերութիւնների վրայ, նա չէ ճանաչում դրանց ոգին. բայց ով, ինչպէս ես, ուսանողական ընկերութեան անդամ է եղել, նրան այդ ոգին չատ լաւ ծանօթ է. Ես ես յոյս ունիմ, մինչև որ գերմանական ուսանողական ընկերութիւնները գոյութիւն ունին, նրանց ոգին, որի չնորհիւ երիտասարդներն այժմ ու քաջութիւն են ստացած, նոյնը կը մնայ, ինչպէս և առաջ, և դուք ուրախութեամբ կը կուռէք սրերով». Այնուհետև գովասանքով խօսելով ուսանողական մենամարտների (Mensur) մասին, ինչպէս ասպետական սովորութեան մասին, որ ամենից աւելի ընդունակ է երիտասարդութեան մէջ զարգացնել մարմնական և հոգեկան ոյժը, քաջութիւնն ու համարձակութիւնը, և յոյս յայտնելով, որ կրոն-պրինցն էլ յետագայում լաւ ուսանող կը լինի, կայսրն իր ճառը վերջացրեց եռակի hohe-ով Բոնի ուսանողների և ուսանողական ընկերութիւնների պատուին։

ՀԻՍ.ԱՄԵՐ.ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԴՆԵՐ. —Նոր Օրլեանում տեղի ունեցած դատաւորների մեղադրական ժողովը, քննելով Նոր Օրլեանի անցքի համար մեղադրուող պարագլուխների գործը, լրապիրների ասելով, կարելի չէ համարել պատասխանատու ճանաչել մեղադրեալներից և ոչ մէկին այն հիման վրայ, որ իտալացի աւազակների վրայ Լինչի օրէնքը գործադրելիս հասասարակ խաոըն են եղել Նոր Օրլեանի բոլոր բնակիչները և սրանք իրենց վարմունքով միայն իրենց հաստատ վճռականութիւն ու իրաւունքն են արտայայտել մարդասպան-աւազակների դէմ. Դարձն այսպէս վճռելով, ասւում են, որ Միացեալ-Նահանգների և Իտալիայի միջև առանց այն էլ լարուած յարաբերութիւնները առաւել ևս կը լարուեն. Ասում են, որ հասարակապետութեան Հռոմի դեսպան Պոտաղին չուտով կը թողնէ իր պաշտօնը և առոդջութիւնը վերականգնելու պատրուակով հրաժարական կը տայ. Դաշնակցական կառավարութիւնը յամենայն դէպս այն մտքով է պատասխանել, թէ ինչն առաջիկայում էլ ոչինչ չի կարող անել, եթէ միայն կոնգրեսը նոր օրէնք չի հրատարակիլ, որով և դաշնակցական իշխանութիւններին հաւատարմութիւն չի տալ առանձին նահանգներին սահպելու, որպէս զի պատիժն միջազգային դաշնագրութիւնները. Իտալական «Populo Romano» լրագիրն առաջարկում է իտալա-ամերիկական միջնադէպը բոլոր կոլտուբական պետութիւնների դատաստանին առաջարկել։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Թէ ինչպէս պէտք է պահել երեխաները.— Երեխան, ծնելուց յետոյ, սկզբի ամիսներում քնելու կարիք է զգում. Նա օրուայ $^{2}/_{3}$ մասը քնած պէտք է անցկացնի. Նա զարթնում է միայն այն ժամանակ, երբ քաղցում է։ Այդ ներանով է բացատրում, որ քնած ժամանակ մարմնի բոլոր գործարանները, արեան չրջանառութիւնը, չնչառութիւնը, մարսողութիւնն և այլն հանդիստ և կանոնաւոր են գործում, իսկ բացարձակ հանգստանում են միայն ուղեղի գիտակցութեան գործարանները, որոնք քնած ժամանակ բոլորովին չեն ենթարկւում արտաքին ազդեցութիւնների։ Երեխան այդ երկար քնելու ժամանակ էլ մեծանում է։ Ուստի կարելոն չափ պէտք չէ խանգարել երեխայի քունը. Եթէ երեխան քաղցած է, նա ինքը կը զարթնի։ Բայց այնուհետև փորը առ փորը նուազում է քնելու պահանջը, այնպէս որ երկու տարեկան երեխան օրուայ ընթացքում այլևս քնելու պահանջ չունի, եթէ նա գիշերը 12 ժամ քնել է։ Երեկոյեան ժամը 7-ին նրան պէտք է պառկեցնել անկողնում և առաւօտեան նոյն ժամին զարթնեցնել։ Երեխային ոչ մի ղէպքում չպէտք է թոյլ տալ, որ զարթնելուց յետոյ անկողնում մնայ, որովհետև այդպիսի դէպքում նա մի քանի ժամ դարձեալ քնում է և այդքան երկար քնելը սովորութիւն է դառնում նրա համար և մինչև անդամ մի պահանջ իր ամբողջ կեանքում։ Երեխան քնած ժամանակ կարող է և մէջքի վրայ պառկած լինել, և կողքի վրայ, և մէջքը դէպի լոյսն արած. գլուխը մարմնից փոքր ինչ բարձր պէտք է լինի, փորը ինչ ևս թեքուած և բոլորովին ծածկուած չպէտք է լինի։ Այդ դրութեամբ երեխան ամենից յարմար կերպով է շընչում և չնչած օդը փչացած չէ լինում։ Երեխան անպատճառ պէտք է փակ բերանով լինի քնած։ Քնած ժամանակ կարելի է զգուշութեամբ փակել նրա բերանը, որպէս զի դրանով նա սովորի քթով չնչել։ Հաստատում են, թէ բերանով չնչառութիւնը չատ հիւանդութիւնների պատճառ է դառնում։ Այդ, ի հարկէ. չափազանցրած է, բայց անկասկած է այն, որ քթով չնչելիս չատ մեծաքանակ նիհթեր, որոնք բերանով չնչելիս ուղղակի թոքերն են մտնում, քթումն են մնում. Օդը քթի մէջ մաքրւում է այնտեղ եղած խիտ խճճուած խոչընդոտում, և ընդ նմին տաքանում է։ Բացի դրանից, բերանը բաց եղած ժամանակ, երեսում է փոխուկ քիմքը, որով և անախորժ խռմփոց է առաջանում. Յետոյ, բերանը ցամաքում է և մինչև անդամ պարբերական կատարը է առաջանում։ Այնուհետև երեխանց մանգալ և սովորում կանգնել, որքան նեղ հագուստը քիչ է խանգարում ոտներն ու ձեռքերը ազատ չարժելուն։ Վեց ամսական երեխան արդէն ուղղակի նստում է. լինն ամսականը կանգնելու առաջին փորձերն է անում, իսկ 14 ամսական երեխան պէտք է մանգայ։ Երեխային մանգալ սովորեցնելու համար արհեստական ոչ մի միջոց կարելի չէ խորհուրդ տալ, որ գործ դրուի։ Չկայ այնպիսի միջոց, որ կարողանայ մի անդամից աւելացնել ոսկորների կիրը և ջղերի ամրութիւնը։ Բացի դրանից երեխային մանգալ սովորեցնելու համար գործադրուող արհեստական միջոցները ճնշում են գործում կղերի և թիակների վրայ և ուրեմն վնասակար ազդեցութիւն են ունենում։ Տուէք երեխային լաւ կաթ, դրէք նրան յատակին գորգի վրայ, յաճախ դուրս տարէք նրան թարմ օդը, մաքուր պահեցէք նրա կաշին և դրանով դուք աւելի չատ աջողութիւն կունենաք, քան թէ բոլոր արհեստական միջոցներով։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՆ

I Անդրկովկասեան երկաթուղի

Գնացքը Թիֆլիս գալիս է

Բաքուից,	պոստ.	11 ժ.	8ր. եր.
Բագուից,	«	7 ժ.	40 ր. առ.
Բաքուից,	մար. ապ.	8 ժ.	— ր. առ.
Գանձակից,	»	8 ժ.	20 ր. եր.

Գնացքը Թիֆլիսից գնում է

Բաքում,	պոստային.	8 ժ.	40 ր. առ.
Բագու,	»	12 ժ.	8 ր. իշ.
Բաքում,	մար. ապ. գն.	3 ժ.	10 ր. ց.
Գանձակ,	«	ժ.	45 ր. առ.

II Անդրկասպեան երկաթուղի

Ռազդն-Ադայից գնում է 6 ժ. 40 ր. եր.
Ռազդն-Ադա գալիս է 7 ժ. 48 ր. առ.
Ռազդն-Ադայից գնացքը գնում է և գալիս երեքչաբթի և չաբաթ օրերը։
Սամալդանդ գնացքը գալիս է և գնում է ուրբաթ և երեքչաբթի օրերը։

I Բօսթով-Վլադիկաւկազի երկաթ.

Վլադիկաւկազից գնում է 9 ժ. 30 ր. առ.
Բոստով գալիս է 8 ժ. 48 ր. առ.
Բոստովից գնում է 7 ժ. 28 ր. ցե.

ՇՈՊԵՆԱՒԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՆ

I Սև ծովի վրայ

Բաքումից գնում են՝
Հինգշաբթի՝ երեկոյեան 4 ժամին ուղիղ գծով, Նովոռոսիյսկ և Սուխում։
Շաբաթ՝ երեկոյեան 8 ժամին, ուղիղ գծով, բոլոր նաւահանգիստներով։
Երկուշաբթի՝ երեկոյեան 7 ժ. արտաւօհմանեան նաւահանգիստներով, Կ. Պոլիս։

Բաթումից գալիս են
Երեքշաբթի՝ կէս օրին մօտ, Օդեսայից, ուղիղ գծով։
Ուրբաթ՝ առաւօտեան Օդեսայից ուղիղ գծով, Կերչի և Նովոռոսիյսկի վրայով։
Կիրակի՝ առաւօտեան Կ. Պոլսից, Փոթիից Բաթում գնում են
Հինգշաբթի՝ առաւօտեան ժ. 9-ին։
Շաբաթ՝ առաւօտեան ժ. 9-ին։
Երեքշաբթի՝ երեկոյեան։
Փոթիից Բաթում գալիս են՝
Ուրբաթ և կիրակի կէս օրից յետոյ ժ. 2-ի մօտերքը։

ՑԱԾՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Իմ եղմայր ԿԱՐԱՊԵՏ ԹՈՒՄԱՅԵԱՆՑԸ, Նուխուց Երևան գնալիս, Աղսոփէ և Քոլէնսոպա կայարանների մէջ՝ անհպոյել է և մինչև օրս չէ գտնուած. կենդանի է նա, թէ սպանուած,—յայտնի չէ ինձ։ Ինքը, բարձրահասակ է և մօտ 30 տարեկան։

Սրանով խնդրում եմ նրանց, որոնց յայտնի է նրա ուր լինելը, յայտնեն ինձ հետեւալ հասցէով՝ Երևան, Աբգար Թումայեանցին։

(166) 3—1.

CRÈME SIMON
(ԿՐԵՄ ՍԻՄՈՆ)

ամենալաւ հոտաւէտ արտադրութիւն, է վչանում և գործէ ածուխմորթը փափկացնելու համար։
ՍՊԻՏԱԿԱԴԵՊ. SIMON և Savon à la CRÈME SIMON ունին միևնոյն հոտը և լրացնում են նրա ներգործութիւնը։
J. SIMON
36, rue de Provence, Paris.
Հատով ծախւում է վարսաւերների և արդուզարդավաճառների մօտ և գլխաւոր տեղերում։
(M.) 14—4

ԿԱՊՍԻԻԼՆԵՐ
ՄԱՏԻԿՕ ԳՐԻՄՕ ԵՒ ԸՆԿ.
(Capsles au Matico)
Պարիզի դեղագործների—Թալլատբուած է Ռուսիայում։

Այդ կապսիւլները պատրաստուած են Մատիկոի և Կոպայ Բալզամի էսանցիայից։ Նրանք պատած լինելով մածոլոչ կեղևով ոչ մի վատ համ կամ հոտ չեն ունենում։
Պահանջել Ռուսիայի գլխ. դեղատներում։
(M.) 13—9

Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերութեան հրատարակութեամբ լոյս տեսան հետևեալ գրքոյկները.

1. Յօհաննա Սպիրի «Վարդ-Բէօլհեն». գերմ. թարգմանեց Ի. Յ. գինն է 10 կոպէկ։

2. Կոմս Լ. Տոլստոյի «Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը բայց դատաստանը շուտ չի անում». թարգ. Մ. Ա. գինն է 7 կոպէկ։

3. Դ. Վալդնէրի «Հաւատարիմ Սավիտրին». հնդկական վէպ. գերմ. թարգմանեց Փ. Վարդանեան։ Գինն է 10 կոպէկ։

Վաճառւում են Տեղրոնական գրավաճառանոցում։

(0-0-0) 10—3

ԼՈՑՄ ՏԵՍԱՆ

Փ. ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ

1. ՌՈԲԻՆԶՈՆ, փոքրերի համար, կոմս Լ. Տոլստոյի «Ясная Поляна»-ից Գինն է . . . . . — 20 կ.
2. ԿՈԼՈՒԶ, փոքրերի համար, նոյն հեղինակի . . . . — 15 կ.
3. ՐԷԹՐԷ, վէպիկ, Հայզէի . . . . . — 30 կ.

(0-0-0) 3—3

ԺԻՐՕԴԵԼ ՊԱՍՏԻԼՂԵՐ
ՆՈՐՎԷԳԻԱՒ ՄԱՔՈՒՐ ՁՐԻՑ ՊԱՏՐԱՍՏԱԾ
ՆԵՐԴՈՐՇՈՒՄ Է ՆԵՐՇՆՉԵԼՈՎ ԵՒ ԿՈՒԻ ՏԱԼՈՎ

Ներքագրեալները յայտնում են այն դեղատներին և քաղցրեղէններին, որոնք ծանրացնում են առաքումը և ներգործութիւն չեն ունենում չնչառական գործարանների վրայ։

ԺԻՐՕԴԵԼԻ ՊԱՍՏԻԼՆԵՐԸ

միակ կատարեալ պատրաստութիւնն են, որ պարգև են տուել 1878 թ. Պարիզի տաղաչարաչային ցուցահանդէսում միջազգային դատաւորների։

ԴՆՈՒՄ ԵՆ ԲՈԼՈՐ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ.

Ամէն մի արկղիկում կայ 72 պաստիլ, գործած քիան եղևնակի բացատրութիւնով։

ՎԱՃԱՌՈՒՄ Է ՄԵՆԴ ԲՈԼՈՐ ՆԱԿՈՒԹԵԱՄԲ.

L. GÉRAUDEL,
Pharmacien à Sai nte-
(Meuehould France).

Պահանջել գործածանշան ընդունած կնիքը։

Այդ պաստիլները ձմեռը չնչած օդը լցնում է կուպրի գոլորշիներով և օդի հետ մտնում է ուղղակի հիւանդ տեղերը. Ներգործութեան այս յատուկ եղանակով, և միևնոյն ժամանակ էլ իրեն բաղադրութեամբ, այդ պաստիլները օգնում են այն ամէն դէպքում, երբ խորտակում են տալիս կուպր գործածելու։

Պահանջել գործածանշան ընդունած կնիքը։

Վաճառւում է Թիֆլիսում դեղատնային ապրանքների Կովկասեան ընկերութեան մէջ։

(M.) 12—12

ШОКОЛАТЪ
Сарай
НАХОДИТСЯ
ВО ВСѢХЪ
ГОРОДАХЪ
РОССІИ.

М. 36—27

Дозволено цензурою. Тифлисъ, 6 го Мая 1891 г. Տպարան Կաւկազ լրագրի գրասենեակի Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр, д. Читахова